

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանական դպրոցը, կարևորելով փաստաբանների համար ստրատեգիական ռազմավարության հմտությունների զարգացումը, ընդհանուր մտահորիզոնի լայնացումը, աշխարհընկալման նոր մոտեցումների ձեռքբերումը, առաջարկում է մասնակցել «Ստրատեգիայի արվեստը» թեմայով դասախոսությանը, որը վարելու է փաստաբան Արտաշես Տեր-Հովհաննիսյանը: Դասախոսության ժամանակ կներկայացվի ստրատեգիական արվեստի զարգացումները, Սուև-ցզիի ստրատեգիայի արվեստի, ինչպես նաև համամարդկային մտածողության հետ կապված այլ հարցեր:

Դասախոսությունը անցկացվելու է **հոկտեմբերի 5-ին, ժամը 12:00-14:00, Բյուրոկրատ**

գրատանը (հասցե՝ Սարյան 19՝ Սարյան-Պուշկին խաչմերուկի վրա, մուտքը՝ Սարյան փողոցից):

Դասախոսության մասնակցությունը կհաշվարկվի որպես պարտադիր վերապատրաստման ժամ (3 ակադեմիական ժամ):

Գրանցվելու համար **զանգահարել (10)**

20-40-93 հեռախոսահամարով,

գրել adv.trainings@gmail.com կամ

coordinat.trainings@advschool.am էլ. հասցեներին:

Ստորև ներկայացվում է անհրաժեշտ նյութը.

Առաջին անգամ հայ ընթերցողի ուղադրությանն են ներկայացվում համաշխարհային ստրատագեմոլոգիայի ուսմունքի հիմնադիր Սուև-ցզիի (մ.թ.ա. VI-V դդ.) <<Ստրատեգիայի արվեստը>>, ինչպես նաև հնագույն Չինաստանի մյուս մեծ գորավար, ստրատեգ Ու-ցզիի (մ.թ.ա. IV դ.) դասական, կոթողային աշխատությունները, որոնք, անցնելով ժամանակի փորձությունը, դասավանդվել են նախ Չինաստանի և Ճապոնիայի, հետո նաև աշխարհի զարգացած երկրների բազմաթիվ ուսումնական հաստատություններում, ռազմական, դիվանագիտական, հետախուզական ծառայության նշանավոր դպրոցներում:

Այս հրաշալի երկերը՝ Ն.Մաքիավելլիի և Կ.Ֆոն Կլաուզեվիցի ստեղծագործությունների նման, հիմք են հանդիսացել կառավարման բազմաթիվ տեսությունների ձևավորման համար: Կարծում

**Ենք, որ սույն երկերը օգտակար կլինեն
ռազմավարագիտական մտքի ձևավորմամբ և
զարգացմամբ հետաքրքրվողների,
դիվանագետների, ՀՀ պաշտպանության
նախարարության հրամկազմի,
արևելագետների, պատմաբան-բանասերների
և, ընդհանրապես, իրենց մտահորիզոնն
ընդլայնելու կարոտ ընթերցողների համար:**

Թարգմանիչ՝

Դասախոս Արտաշես Տեր- Հովհաննիսյան


Նախորդ նորությունը: ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

Հաջորդ նորությունը: ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվող նորություններ



17.09.2013 ՍԵՊՏԵՄԲԵՐ
ԱՄՍՎԱ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ



29.10.2013
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑՈՒՄ



30.09.2013 ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ



04.11.2013 ՆՈՅԵՄԲԵՐ
ԱՄՍՎԱ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ